Յունիբանկ հաշվարկային տոկոսադրույք (ՅՀՏ)

ՈՒԺի մեջ է մտնում 16.05.2023թ.

Արժույթ	ՅՀՏ	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	9.2% (վերջին հրապարակում)	-

Մեթոդաբանություն

"Յունիբանկ" ԲԲԸ-ի կողմից լողացող տոկոսադրույքների սահմանման համար հիմք հանդիսացող հաշվարկային տոկոսադրույքի սահմանման՝

Գլուխ 1. Նպատակը

1. Սույն մեթոդաբանության նպատակն է **«Յունիբանկ հաշվարկային տոկոսադրույքի»** (այսուհետ՝ ՅՀՏ) հաշվարկման կարգը, որի կիրառումը հնարավորություն կտա հաճախորդներին տրամադրել երկարաժամկետ վարկային միջոցներ և միևնույն ժամանակ հնարավորություն կտա զսպելու Բանկի ակտիվների եկամտաբերությունների ժամկետային ռիսկը՝ պայմանավորված տոկոսադրույքների հնարավոր փոփոխությամբ:

Գլուխ 2. ՅՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները

2.ՅՀՏ-ի հիման վրա կարող են սահմանվել Բանկի սեփական ռեսուրսներով ՀՀ դրամով տրամադրվող վարկերի բազիսային տոկոսադրույքները:

3.հաշվարկվող <u>ՅՀՏ՝</u>

ՅՀՏ=ՄԿՏ

Որտեղ՝

- **ՄԿՏ** (Միջին կշռված տոկոսադրույք) - ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված «181 օրից մինչև 1 տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 (մեկ) թվի ճշտությամբ:
  «ՄԿՏ» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի «Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx)

Գլուխ 2. ՅՀՏ-ի սահմանումը և կիրառումը

4. ՅՀՏ-ն Բանկի կողմից սահմանվում է տարեկան երկու անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալ ամսվան նախորդող ամենաթարմ համապատասխան տոկոսադրույքը:

5. ՀՀ ԿԲ կողմից առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «181 օրից մինչև 1 տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը 6 ամսվա ընթացքում չհրապարակելու դեպքում հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

ՅՀՏ=ՊՄՏ+Ճշգրտող գործակից

Որտեղ՝

- **ՊՄՏ** - ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող, ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվանշանի ճշգրտությամբ
- **«ՊՄՏ»** հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից՝ (https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx) ինտերնետային կայքում:
- **Ճշգրտող գործակից**- ՀՀ ԿԲ կողմից առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «181 օրից մինչև 1 տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքի վերջին հրապարակած ցուցանիշի (**ՄԿՏ**) և ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող, ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշի (**ՊՄՏ**) տարբերություն:

Ճշգրտող գործակից = **ՄԿՏ-ՊՄՏ**

6.ՅՀՏ-ն փոփոխվում է այն դեպքում, երբ ՅՀՏ հիմքում ընկած տոկոսադրույքը՝ Բանկի կողմից հրապարակած նախորդ ՅՀՏ ցուցանիշի հիմքում դրված տոկոսադրույքի համեմատ փոփոխվել է 1% և ավել տոկոսային կետով:

7.Սույն մեթոդաբանությունը գործում է այն վարկերի և լողացող տոկոսադրույքով տրամադրվող այն վարկային գործիքների համար, որոնք հաստատվել են 15/05/2023թ-ից սկսած:

8.Լողացող տոկոսադրույքների դեպքում անվանական տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է +/- 3 տոկոսային կետ: